

TREATY SERIES No. 11 (1920).



**ՀՀ Բիւրոյի
Երիտասարդական Քրասնեակ**

TREATY OF PEACE

Ամբողջական

Հայաստան

Արդար

Հարուցում

Presented to Parliament by Command of His Majesty.

100 *ամեակ*
ՍԵՆՔ

LONDON:

Բովանդակություն

-Մեր Խօսքը	1
-Ամփոփ ժամանակագրություն	3
-Սելրի հայանպաստ յօդուածները	14
-Նախագահ Ուիլսոնի իրաւարար վճիռը	17
-Սելրի եւ իրաւարար վճիռի վաւերականութիւնը	19
-Հայոց Տեղասպանութեան հետեւանքները	24
-Մեր պահանջքները	26

Մեր Խօսքը

2020 թուականը յոբելեանական է երկու փաստաթուղթերով՝ Սելրի Դաշնագիրի եւ Ուիլսընի Իրաւարար Վճիռին համար, որոնք անկիւնաքարային եւ շատ կարեւոր նշանակութիւն ունին Հայոց Յեղասպանութեան, յատկապէս հողային պահանջատիրութեան կամ հայ ժողովուրդի իրաւունքի վերականգման տեսակետէն:

Սելրի Դաշնագիրը կը հանդիսանայ այն միջազգային վաւերաթուղթը, ուր Թուրքիան կը հաստատէ եւ պատասխանատուութիւն կ'ընդունի հայերու դէմ գործած իր ոճիրներուն համար:

Շնորհիւ հայութեան անխոնջ պայքարին՝ Յեղասպանութեան միջազգային ճանաչումը յաջողութիւններ արձանագրած է: Սակայն չի բաւեր օտար պետութիւններու եւ նոյնիսկ Թուրքիոյ կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը: Յեղասպանութենէն 105 տարիներ ետք մեր հողային, նիւթական եւ բարոյական արդար իրաւունքներու պահանջատիրութեան պայքարը տակաւին կը մնայ իր սկզբնակէտին մէջ: Ի վերջոյ մեր ազգային իրաւունքներու և պահանջներու բաւարարմամբ է, որ արդարութիւնն ու մեր խոցուած արժանապատուութիւնը կը վերականգնուին, եւ մեր ազգի գոյերթը կը դառնայ անվտանգ ու անխափան:

Այսօր ընդվզումով կ'արձանագրենք, որ 100 տարի ետք Սելրի Դաշնագիրն ու Ուիլսընեան իրաւարար վճիռը չեն իրագործուած, ոճրագործը չէ պատժուած, միջազգային ընտանիքը, քաղաքական շահերէ մեկնած, հրաժարած է իր իրաւարարի պարտականութենէն, իսկ հայութիւնը տակաւին կը մնայ իր արդար պահանջներուն չտիրացած՝ զոհի կարգավիճակին մէջ:

Հրաժարիլ մեր արդար իրաւունքներէն, կը նշանակէ ո'չ միայն դաւաճանել մեր միլիոնաւոր զոհերուն, այլեւ մշտական դարձնել հայ ժողովուրդի եւ Հայաստանի Հանրապետութեան հանդէպ թրքական եւ ադրբեջանական սպառնալիքները եւ տկարացնել մեր ազգի անվտանգութիւնը:

Սելրի Դաշնագիրի նպատակն ու բովանդակությունը համարելով հայ ժողովուրդի պահանջատիրության հիմքը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության երիտասարդական շարքերը յանձնառու են զայն այժմեական հիմնախնդրի վերածելու եւ հասցնելու իր յաղթական նպատակակետին:

2020-ին, աւելի քան երբեւէ, անհրաժեշտութիւն է հմտանալ քաղաքագիտութեան, պատմագիտութեան, ցեղասպանագիտութեան, միջազգային իրաւունքներու վերաբերող մասնագիտական նիւթերու մէջ՝ նոր թափ հաղորդելու համար Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն:

Այս գրքոյկը ՀՀԴ Բիւրոյի երիտասարդական գրասենեակի Ուսանողական հարցերով զբաղող յանձնախումբին աշխատութիւնն է, որ տարբեր աղբիւրներու ուսումնասիրութեամբ կը միտի իրագելել հայ երիտասարդութիւնը Սելրի Դաշնագիրի եւ Ուիլսընի Իրաւարար Վճիռի միջազգային անժամանցելի փաստաթուղթերուն մասին: Շեշտենք, որ երիտասարդներու կողմէ բժախնդիր եւ երկար պրպտումներու արդիւնք հանդիսացող այս գործը մասնագիտական մակարդակի ուսումնասիրութիւն մը ըլլալու յաւակնութիւնը չունի: Կը յուսանք, որ ան օգտակար կը դառնայ հայ երիտասարդութեան:

Հայ ժողովուրդի ոտնահարուած իրաւունքներու արդար հատուցումը ապահովող այս երկու փաստաթուղթերը կը հանդիսանան այն կռուանը, որ պետք է օգտագործել մեր պահանջատիրության գործընթացին մէջ: Կը հաւատանք, որ բոլոր մակարդակներու վրայ յարատեւ պայքարի ճամբով հայութիւնը ուշ կամ կանուխ պիտի վերականգնէ իր արդար իրաւունքները:



Ամփոփ ժամանակագրություն Սերի Դաշնագրի եւ Ուիլսընի Իրաւարար Վճիռի պատմութեան

☉ Զամաշխարհային Ա Պատերազմին (1914-1918) Օսմանեան Կայսրութիւնը Գերմանիոյ եւ Աւստրո-Յունգարիոյ կողքին պատերազմեցաւ ընդդէմ դաշնակից պետութիւններուն՝ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ: Պատերազմը յարմար առիթ էր Թուրքիոյ հա-մար՝ իրականացնելու իր փանթուրանական երբեմնի երազը: Տասնամեակներ առաջ հայ ժողովուրդի դէմ հալածանքներն ու ջարդերը իրենց գագաթնակէտին հասան 1915ին՝ Զայոց Տեղասպանութեամբ:

☉ **1918 Մայիս 21-էն 29.**- Զայ ժողովուրդը, կենաց-մահու հերոսական գոյամարտեր մղելով Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի մէջ, յաջողեցաւ կասեցնել կովկասեան ճակատի վը-րայ թրքական յառաջխաղացումը:

☉ **1918 Մայիս 28.**- Անդրկովկասեան Սէյմի լուծումէն ետք Զայոց Ազգային Խորհուրդը յայտարարեց Զայաստանի անկախութիւնը՝ հռչակելով Զայաստանի Զանրապետութիւնը:

Ֆրանսայի Սեր քաղաքի մէջ գտնուող պալատը, ուր ստորագրուած է դաշնագիրը



🌀 **1918 Յունիս 4.**- Պաթումի Դաշնագիրի կնքումով Թուրքիոյ անցան, Կարսէն եւ Արտահանէն բացի, Սուրմալուի, Շարուրի եւ Նախիջեւանի գաւառները, ինչպէս նաեւ Էջմիածինի եւ Ալեքսանդրապոլի գաւառներուն մեծ մասը:

🌀 **1918 Յոկտեմբեր 30.**- Թուրքիան, պարտուած դուրս գալով Յամաշխարհային Ա Պատերազմէն, ստորագրեց Սուտրոսի զինադադարը: Թրքական զօրքերը քաշուեցան ՅՅ տարածքէն եւ Կարսի մարզէն: ՅՅ Կառավարութիւնը չեղեալ յայտարարեց Պաթումի Դաշնագիրը:

🌀 **1918 Նոյեմբեր 11.**- Յամաշխարհային Ա Պատերազմի ավարտուեցաւ, երբ յաջորդաբար Պուլկարիան, Աւստրո-Յունգարիան եւ Գերմանիան վար դրին իրենց զէնքերը: Պատերազմի ավարտէն ետք թրքական զօրքերը քաշուեցան Յայաստանի Յանրապետութեան տարածքէն եւ Կարսի մարզէն:

🌀 **1919 Յունուար 18.**- Սկիզբ առաւ Փարիզի Խաղաղութեան վեհաժողովը, որուն մասնակցեցան մէկ կողմէն՝ յաղթող հիմնական երկիրները՝ Բրիտանական Կայսրութիւնը, Ֆրանսան, Իտալիան, Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ քանի մը տասնեակ յաղթող երկիրները, միւս կողմէն՝ պարտուող երկիրները՝ հիմնականօրէն Գերմանիան, Աւստրո-Յունգարիան, Պուլկարիան եւ Օսմանեան Կայսրութիւնը: Մասնակից եւ յաղթող երկիրներէն էր Յայաստանի Յանրապետութիւնը, որ պաշտօնապէս չէր հրաւիրուած վեհաժողովին: Այդուհանդերձ Փարիզ գտնուող Յայաստանի Յանրապետութեան պատուիրակութիւնը՝ Ալետիս Ահարոնեանի գլխաւորութեամբ եւ Ազգային պատուիրակութիւնը՝ Պօղոս Նուպար փաշայի գլխաւորութեամբ ներկայացան դաշնակիցներուն՝ ինդրելով ճանչնալ հայերու ազգային պահանջները:

🌀 **1919 Յունուար 28.**- Վեհաժողովի Վերսալի նիստին ընթացքին հաստատուեցաւ Ազգերու Լիկայի կանոնադրութիւնը:

🌀 **1919 Յունուար 30.**- Յամաշխարհային Ա Պատերազմի յաղթանակած կողմի գերագոյն խորհուրդը (քառեակը)՝ Մեծն Բրիտանիան, Իտալիան, Ֆրանսան եւ Ճափոնը, միասնաբար յայտարարեցին, որ Օսմանեան իշխանութիւնները չեն կատարած իրենց պարտաւորութիւնը ոչ մահմետական հպատակներուն

պաշտպանելու համար, այլ, ընդհակառակը, կազմակերպած են այդ բնակչության զանգուածային կոտորածներ: Անոնք կ'ընդգծէին, որ այդ տարածքներուն մէջ թրքական իշխանութիւնը պետք չէ շարունակուի, եւ հոն պետք է հաստատուի անկախ հայկական պետութիւն:

🌀 **1919 Սեպտեմբեր 23.**- Միացեալ Նահանգներու Նախագահ Ուիլսըն իր ուղերձով կը նշէր. «Յայաստան մէկն է այն շրջաններէն, որ պետք է ըլլայ Ազգերու Լիկայի խնամակալութեան ներքեւ: Յայաստան պետք է ազատուի: Թուրքին պետք է արգիլուի իշխանութիւն բանեցնել հոն: Ուիլսընի առաջադրած սկզբունքները ճանչցուեցան իբրեւ խաղաղութեան բանակցութիւններու հիմք:

🌀 **1920 Յունուար 19.**- Փարիզի վեհաժողովի մասնակից հիմնական երկիրները՝ Մեծն Բրիտանիան, Ֆրանսան եւ Իտալիան ճանչցան Յայաստանի Յանրապետութեան անկախութիւնը:

🌀 **1920 Փետրուար.**- Լոնտոնի մէջ Օսմանեան Կայսրութեան ճակատագիրի որոշմանը յատկացուած համաժողովին անդրադարձ կատարուեցաւ Յայաստանի Յանրապետութեան տարածքի ճշդումին: Զննարկման առարկայ էր Օսմանեան Կայսրութենէն որոշ տարածքներ Յայաստանի Յանրապետութեան միացնելու հարցը: Առ այդ այս հարցը որոշելու համար յառաջացաւ Իրաւարար Վճիռին անհրաժեշտութիւնը:

Սերի Դաշնագիրի ստորագրութեան համար օգտագործուած կաղամարը




☉ **1920 Փետրուար 24.-** Ազգերու Լիկայի վերահսկողութեան ներքոյ ստեղծուած Հայաստանի սահմաններու որոշման յանձնաժողովը՝ կազմուած Ազգերու Լիկայի խորհուրդի չորս երկիրներէն՝ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա եւ Ճափոն, հանդես եկաւ գեկոյց-առաջարկով եւ ներկայացուց Հայաստանի, Ազրբայճանի եւ Վրաստանի սահմանները յստակեցնող ծրագիր մը: Կարելորութեամբ պետք է նշել, որ սոյն ծրագիրով Արցախը մաս կը կազմեր Հայաստանի Հանրապետութեան:

☉ **1920 Ապրիլ (19-26).-** Փարիզի վեհաժողովի նիստերէն Սան Ռեմոյի (Իտալիա) նիստի ընթացքին հանգամանօրէն քննարկուեցաւ Հայաստանի Հանրապետութեան սահմանները ճշդելու հարցը:

☉ **1920 Ապրիլ 23.-** ԱՄՆ-ի նախագահ Վուտրո Ուիլսոն ճանչցաւ Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը: Միւս կողմէն՝ նոյն թուականին Անգարայի մէջ ստեղծուած Էր Թուրքիոյ Մեծ ժողովը՝ Մուսթաֆա Բեմալի գլխաւորութեամբ:

☉ **1920 Ապրիլ 26.-** Սան Ռեմոյի նիստին Դաշնակից երկիրներու Գերագոյն Խորհուրդը նամակով դիմեց Միացեալ Նահանգներու

Դաշնակից երկիրներու քառեակը



Նախագահ Ուիլսոնին՝ երկու խնդրանքով. առաջին՝ որպեսզի ԱՄՆ-ը ստանձնէ Յայաստանի Հանրապետութեան հոգատարութիւնը (մանդատ, mandate), երկրորդ՝ որպեսզի նախագահ Ուիլսոն հանդէս գայ իբրեւ իրաւարար Յայաստանի եւ Թուրքիոյ միջեւ վերջնական սահմանի ճշդման հարցով: Դաշնագիրին Յայաստանի վերաբերող մասին մէջ որոշուեցաւ արձանագրել, որ Թուրքիան, Յայաստանը եւ պայմանաւորուող միւս կողմերը համաձայն են դիմելու Միացեալ Նահանգներու նախագահի իրաւարարութեան՝ Թուրքիոյ եւ Յայաստանի Հանրապետութեան սահմանները ճշդելու համար եւ կ'ընդունին այդ հարցով անոր որոշումը, ինչպէս նաեւ՝ որեւէ պայման, որ ան կ'առաջարկէ Յայաստանը դէպի ծով ելք ունենալու համար: Նախագահ Ուիլսոնին ներկայացուած իրաւարարութեան դիմումը յետագային ամրագրուեցաւ Սելրի դաշնագրի 89-րդ յօդուածի տեսքով:

🌀 **1920 Մայիս 11.**- Սելրի Դաշնագիրին նախօրինակը կը յանձնուի Թուրքիոյ պատուիրակութեան՝ Դաշնակից ուժերու ներկայացուցչութեան կողմէ:

🌀 **1920 Մայիս 17.**- ԱՄՆ-ի նախագահը իր պաշտօնական համաձայնութիւնը տուաւ հայ-թրքական սահմանը ճշդելու հարցով որպէս իրաւարար հանէս գալու:

🌀 **1920 Յունիս 1.**- ԱՄՆ-ի Ծերակոյտը (Senate) դեմ քուէարկեց եւ չստանձնեց Յայաստանի հոգատարութիւնը (mandate)՝ 52 դեմ 23 կողմ ձայներու յարաբերակցութեամբ: Ծերակոյտը կը դիտարկէր, որ հոգատարութիւն ստանձնելը կ'ենթադրէր բազմահազար զօրք տեղակայել եւ հսկայական գումար տրամադրել այդ տարածաշրջանին մէջ: Առաւել՝ ԱՄՆ-ի Ծերակոյտը մերժած էր Վերսալի Դաշնագիրը, հետեւաբար մերժած էր Ազգերու Լիկայի կանոնադրութիւնը: Հետեւաբար՝ ԱՄՆ-ը չէր կրնար ստանձնել հոգատարութիւնը, որ իր սկզբունքով պետք է հիմնուէր Ազգերու Լիկայի կանոնադրութեան վրայ:

🌀 **1920 Յունիս.**- Հայաստան-Թուրքիա սահմանի իրաւարար վճիռը պատրաստելու համար ստեղծուեցաւ մասնագիտական ուսումնասիրութիւններու յանձնաժողով մը՝ ԱՄՆ-ի պետքարտուղարութեան եւ նախագահի վարչակազմի մասնակցութեամբ: Այս յանձնաժողովը գլխաւորեց Ուիսքոնսոն

համալսարանի դասախօս Ուիլիլմ Ուեսթմենը՝ իրեն աջակից ունենալով Լորդես Մարտինը եւ Հարիսըն Տուայտը: Յանձնաժողովը, չորս ամսուան ընթացքին հարցաթերթիկներ ցրելով, Համաշխարհային Ա Պատերազմի ընթացքին կամ նախօրէին Օսմանեան Կայսրութեան մէջ գործ ունեցողներու (ամերիկեան միսիոնարներու, առեւտրականներու եւ ամերիկացի պաշտօնատարներու) առաւելագոյն ժողովրդագրական տուեալները հաւաքեց: Սելրի Դաշնագիրի ստորագրութենէն յետոյ վերոնշեալ յանձնախումբը պաշտօնապէս շարունակեց իր աշխատանքը:

🌀 **1920 Յուլիս 17.-** Սելրի Դաշնագիրի նախօրինակին թրքական բողոքներուն դէմ որպէս պատասխան՝ դաշնակից ուժերու ներկայացուցիչները յայտարարեցին, որ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան եւ Օսմանեան Կայսրութեան



Թրքական պատուիրակութիւնը կը ստորագրէ Սելրի Դաշնագիրը

որոշ տարածքներու միացման մասին որեւէ փոփոխութիւն չի կրնար կատարուիլ: Յստակ կ'արձանագրուի, որ իրաւարարութեան գործընթացն այլեւս անդառնալի է եւ պիտի շարունակուի: Չուզահեռաբար նախօրինակին վերաբերեալ թուրքիոյ կողմէ բարձրացուած առարկութիւնները քննարկուեցան, եւ ի վերջոյ մասնակի փոփոխութիւններով պատրաստուեցաւ դաշնագիրի վերջնական տարբերակը, որ նոյն օրը թուրքիոյ պատուիրակութեան յանձնուեցաւ:


🌀 **1920 Օգոստոս 10.-** Ստորագրուեցաւ Սելի (Փարիզի արուարձաններէն) դաշնագիրը Օսմանեան Կայսրութեան (սուլթանական կառավարութեան) եւ դաշնակից պետութիւններուն միջեւ: Հայաստանի Հանրապետութեան կողմէ դաշնագիրը ստորագրեց Աւետիս Ահարոնեան: Սակայն յետագային Անգարայի Քեմալական կառավարութիւնը չհաստատեց կնքուած դաշնագիրը:

🌀 **1920 Օգոստոս 25.-** Կայացաւ Մուսկուլայի առաջին համագումարը, ուր կնքուեցաւ ռուս-թրքական առաջին գաղտնի պայմանագիրը Լենինի եւ Քեմալի միջեւ:

🌀 **1920 Սեպտեմբեր 23.-** 30 հազար հաշուող քեմալական բանակը յարձակեցաւ Հայաստանի Հանրապետութեան վրայ՝ գրաւելով Սարիղամիշը եւ Կաղզուանը:

🌀 **1920 Սեպտեմբեր 28.-** Սելի Դաշնագիրի ստորագրութիւնէն շուրջ մէկուկէս ամիս ետք իրաւարար վճիռի յանձնաժողովը ԱՄՆ-ի

Սելի Դաշնագիրը ստորագրած Աւետիս Ահարոնեանի գրիչը



պետքարտուղարութեան յանձնեց իր ամբողջական գեկոյցը, որ հիմք ծառայեց նախագահ Ուիլսոնի Իրաւարար Վճիռին համար:

🌀 **1920 Յոկտեմբեր 30.**- Բուլշեւիկեան քարոզչութեան արագընթաց տարածման եւ համատարած դասալքութեան պատճառով հայկական բանակը մեծ մասամբ կազմալուծուեցաւ: Այս դժուար պայմաններուն մէջ Կարսը յանձնուեցաւ թրքական բանակին:

🌀 **1920 Նոյեմբեր 22.**- ԱՄՆ-ի նախագահ Վուտրօ Ուիլսըն ստորագրեց Իրաւարար Վճիռը, եւ ան մըտաւ ուժի մէջ: Այս փաստաթուղթը ստորագրած է նաեւ պետքարտուղար Պէնպրիճ Կոլպի: Փաստաթուղթը կը կրէ ԱՄՆ-ի մեծ կնիքը՝ կարմիր ժապաւեններով կապուած: Նշենք, որ այս մեծ կնիքը ամենաբարձր իրաւական կարգավիճակ կը հաղորդէ ցանկացած փաստաթուղթի՝ նախագահի եւ պետքարտուղարի ստորագրութեանց հետ միասին: Այսպէս՝ ԱՄՆ-ի Սահմանադրութեան մէջ յօդուած մը կայ, որ կ'ըսէ, թէ նախագահին ստորագրութիւնը կրող որեւէ փաստաթուղթ կը դառնայ Ամերիկայի ներքին օրէնք (law of the land): ԱՄՆ-ի նախագահ Ուիլսընի Իրաւարար Վճիռի բնօրինակէն մէկը այժմ կը պահուի Ամերիկեան Ազգային Արխիւներուն մէջ (National Records and Archives):

🌀 **1920 Նոյեմբեր 24.**- Իրաւարար Վճիռին եական բաժինը հեռագրով փոխանցուեցաւ ԱՄՆ-ի Փարիզի դեսպան Ուալասին՝ յանձնարարելով յանձնել այն խաղաղութեան խորհրդաժողովի քարտուղարութեան, որպէսզի իր կարգին փոխանցէր Դաշնակից ուժերու Գերագոյն Խորհուրդին:

🌀 **1920 Դեկտեմբեր 2.**- Թրքական եւ բուլշեւիկեան սուլիներու միջեւ մնացած Յայաստանի Յանրապետութիւնը հարկադրաբար տեղի տուաւ, կորսնցուցնուող արձակ տարածքներ եւ լի վերջոյ խորհրդայնացաւ:

🌀 **1920 Դեկտեմբեր 6.**- Բրիտանացիները, շնորհակալ ըլլալով ԱՄՆ-ի նախագահին, առաջարկեցին չիրապարակել Վճիռը, որովհետեւ Յայաստանի խորհրդայինացումը այդ Վճիռը անիմաստ կը դարձնէր:

🌀 **1920 Դեկտեմբեր 6.**- Դեսպան Ուալասը նամակով մը խաղաղութեան խորհրդաժողովի քարտուղարութեան փոխանցեց Իրաւարար Վճիռը: Նախագահ Ուիլսընի Իրաւարար Վճիռը Դաշնակից ուժերու Գերագոյն Խորհուրդին յանձնուեցաւ Յայաստանի խորհրդայնացումէն չորս օր

Ետք:

🌀 **1920 Դեկտեմբեր 7.-** Դեսպան Ուալասը նոյն թուականի նամակով հաստատեց Վճիռին յանձնումը Խաղաղութան Խորհրդաժողովի քարտուղարութեան:

🌀 **1920 Դեկտեմբեր 17.-** Ուիլսըն, հաւատարիմ մնալով իրաւարարի բարձր կարգավիճակին եւ հակառակ իր առողջական ծանր վիճակին, 10 օր բանակցելէ ետք տեղի չտալով քաղաքական ճնշումներուն եւ հակառակ Յայաստանի Խորհրդայնացումին, հրապարակեց իրաւարար վճիռը, եւ իրաւական տեսակէտէն այն ուժի մէջ մտաւ:



Սրահը, ուր ստորագրուած է դաշնագիրը



Հայաստանի
անկախության
հռչակում

28 Մայիս

Համաշխարհային
Ա. Պատերազմի
աւարտ

11 Նոյեմբեր

1918

1919




Մուտրոսի
պայմանագրի
ստորագրումով
Թուրքիա
կ'ընդունի իր
պարտութիւնը
դաշնակից
ուժերէն

30 Հոկտեմբեր


Սկիզբ
Փարիզի
Խաղաղության
վեհաժողովին

18 Յունուար



Ման Ռիմոյի
մէջ
դիմում ԱՄՆ
նախագահ
Ուիլսոնին

26 Ապրիլ



TRAITÉ
ENTRE
LES PRINCIPALES PUISSANCES ALLIÉES
ET L'ARMÉNIE
SIGNÉ
LE 10 AOÛT 1920
À SÈVRES

Կը
ստորագրուի
Սելի
դաշնագիրը


10 Օգոստոս



Կը
հրապարակուի
Ուիլսոնի
իրաւարար
վճիռը

17 Դեկտեմբեր

1920



ԱՄՆ
նախագահը կը
համաձայնի
ստանձնել
Հայաստան-
Թուրքիա
սահմանագծումի
իրաւարարութիւնը

17 Մայիս



Վուտրո
Ուիլսոն կը
ստորագրէ
իրաւարար
վճիռը

22 Նոյեմբեր

Հայաստանի եւ Հայութեան վերաբերող Սելի Դաշնագրին յօդուածները

Սելի Դաշնագիրը ստորագրուեցաւ 10 Օգոստոս 1920-ին Ֆրանսայի Սելր քաղաքին մէջ՝ յաղթական Դաշնակից ուժերու եւ պարտուած Թուրքիոյ միջեւ:

Ստորագրող կողմերն էին մէկ կողմէն՝ Բրիտանական Կայսրութիւնը (Միացեալ Թագաւորութիւն, Քանադա, Աւստրալիա, Նիւ Չիլընտ, Հարաւային Ափրիկէ, Հնդկաստան), Ֆրանսան, Իտալիան եւ Ճափոնը՝ որպէս գլխաւոր դաշնակից պետութիւններ, եւ այս պետութիւններու դաշնակից Հայաստանը, Պելճիքան, Յունաստանը, Հիճազը, Լեհաստանը, Փորթուգալը, Ռումանիան, Սերպ-Խրուաթ-Սլովանիան եւ Չեխո-Սլովաքիան, իսկ միւս կողմէն՝ Թուրքիան: Դաշնագրի ստորագրման նպատակն էր Համաշխարհային Ա Պատերազմէն յետոյ Դաշնակից ուժերու եւ Թուրքիոյ միջեւ խաղաղութիւն հաստատելու պայմաններ ճշդումը:

Թուրքիոյ հետ խաղաղութիւն հաստատելու համար կարգ մը այլ պայմաններու շարքին Սելի Դաշնագիրով Թուրքիան պատասխանատուութիւն կը ստանձնէր 1914-էն ի վեր հայերու դէմ գործած ոճիրներուն համար եւ հատուցման պարտաւորութիւն կը ստանձնէր նիւթական այն կորուստներուն համար, որուն ենթարկուէր

Սելի Դաշնագրի ստորագրում



Էին պատմութեան այդ ժամանակահատուածին Թուրքիոյ սահմաններէն ներս բնակող հայերը՝ բռնագաղթի եւ ջարդերու պատճառով:

88-րդ յօդուածով Թուրքիան կը յայտարարեր, թէ ինքը կը ճանչնայ Յայաստանը իբրեւ ազատ եւ անկախ պետութիւն, ինչպէս իրմէ առաջ ճանչցած էին Դաշնակից պետութիւնները:

89-րդ յօդուածով Թուրքիան եւ Յայաստանը, ինչպէս նաեւ պայմանագիրի միւս բարձր կողմերը, կը համաձայնէին Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահի իրաւարարութեան յանձնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթլիսի նահանգներուն մէջ Թուրքիոյ եւ Յայաստանի սահմաններու որոշման խնդիրը եւ ընդունիլ նախագահին որոշումով Յայաստանին դէպի ծով ելք տալու եւ վերոյիշեալ սահմանին յարակից Օսմանեան բոլոր հողերու ապառազմականացման որոշումները:

90-րդ յօդուածը կը նախատեսեր, որ եթէ 89-րդ յօդուածի տրամադրութեան համաձայն ճշդուած սահմանով վերոյիշեալ նահանգներու հողատարածքի մէկ մասը կամ ամբողջութիւնը փոխանցուի Յայաստանին, Թուրքիան որոշման թուականէն կը հրաժարեր այդ հողատարածքներու կապակցութեամբ իր իրաւունքներէն:

Սեւրի Դաշնագիրին մէջ կան երեք այլ յօդուածներ, որոնք կարելոր են ցեղասպանութիւն իրագործած պետութեան պատասխանատուութիւն սահմանելու առումով: Անոնք են թիւ 226, 228 եւ 230 յօդուածները, որոք Սեւրի պայմագիրի «պատժամիջոցներ» հատուածէն են:

226-րդ յօդուածով մասնաւորապէս կը նշուեր, որ թրքական իշխանութիւնները կ'ընդունին յաղթանակած տերութիւններուն իրաւունքը՝ պատասխանատուութեան ենթարկելու այն թուրք պաշտօնեաները, որոնք պատերազմական յանցանքներ կատարած են Յամաշխարհային Ա Պատերազմի ընթացքին եւ առաջին իսկ պահանջով պետք է զանոնք յանձնեն յաղթանակած պետութիւններու արդարադատութեան՝ անկախ անկէ, որ թրքական արդարադատութեան կողմէ պատասխանատուութեան կանչած են զանոնք կամ ոչ:

228-րդ յօդուածին մէջ կը նշուեր, որ Թուրքիան պետք է կառավարա-

կան անհրաժեշտ փաստաթուղթերը յանձնե՛լ՝ յանցագործներուն պատասխանատուութիւնը ճիշդ գնահատելու եւ համապատասխան պատիժներ սահմանելու համար:

230-րդ յօդուածին մէջ կը նշուեր, որ թրքական իշխանութիւնները պէտք է յաղթանակած տէրութիւններուն յանձնեն այն յանցագործները, որոնք մեղսակից են մինչեւ Յամաշխարհային Ա Պատերազմի սկիզբը Թուրքիոյ իշխանութեան տակ գտնուող խաղաղ հայ բնակչութեան զանգուածային կոտորածներ կազմակերպելու յանցանքին:

Թիւ 144 յօդուածով հայերու կրած նիւթական իրաւունքներու վերականգման յստակ ձեւաչափեր կը սահմանուէին: Հոն յստակ արձանագրուած էր, որ «լքեալ գոյքեր»ու օրէնքը պէտք է չեղեալ համարուի: Հայերու լքեալ ունեցուածքը, որ թրքական կառավարութեան համապատասխան հրամանագիրով բռնագրաւուած էր, պէտք էր վերադարձուեր իր իրաւատիրոջ: Աւելին՝ պիտի ստեղծուէին խառն իրաւարար յանձնաժողովներ՝ ներառելով մէկական ներկայացուցիչ թրքական կառավարութենէն եւ տուժող համայնքէն: Յանձնաժողովներու նախագահները պիտի ըլլային Ազգերու Լիկայի խորհուրդին կողմէն նշանակուած պաշտօնեաներ: Յանձնաժողովը պիտի վճռեր, թէ գոյքը որո՞ւն կը պատկաներ եւ եթէ բռնագրաւուած էր՝ վերադարձուեր իր տիրոջ: Այս յանձնաժողովներուն ընդունած որոշումները անբեկանելի էին եւ չէին կրնար վերանայուիլ Թրքական որեւէ դատարանի կամ կառավարական օղակի կողմէ:

Դաշնակից երկիրներու ներկայացուցիչներ պալատի մուտքին





ԱՄՆ-ի Նախագահ Վուոթո Ուիլսոն

Նախագահ Ուիլսոնի Իրաւարար Վճիռը

Նախագահ Վուոթո Ուիլսոնի Իրաւարար Վճիռը Ներկայացուեցաւ 22 Նոյեմբեր 1920-ին:

Իրաւարար Վճիռի պաշտօնական անուանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահին որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ»:


Իրաւարար Վճիռի հիմնական որոշումները հետեւեալներն են.

1- Հայաստանի Հանրապետութեան տիտղոսն ու իրաւունքները կը ճանչցուին Օսմանեան Կայսրութեան Վանի, Պիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգներու՝ ընդհանուր առմամբ 103,599 քառակուսի քիլօմէթր տարածքի վրայ: Իրաւարար վճիռով աւելցուած տարածքներուն վրայ հայ բնակչութեան թիւը կը կազմեր 52%: Համաձայն Ուիլսոնի պատկերացումին՝ 20-25 տարուան մէջ կը Նախատեսուէր, որ այդ տոկոսը կ'աճի մինչեւ 70% հայ՝ հիմնականին մէջ ներգաղթի շնորհիւ, Նաեւ մահմետական բնակչութեան կամաւոր եւ բանակցուած արտագաղթի հետեւանքով:

2- Տրապիզոնի նաւահանգիստն ու Քարշուտ գետի հովիտը Հայաստանի սահմաններու մէջ ներառելով՝ կը վճռուի Նաեւ Հայաստանի՝ դէպի ծով իջնելու հնարաւորութեան հարցը: Բացի Տրապիզոնի նաւահանգիստէն՝ իրաւարարութեամբ Հայաստանին կը տրուի 4 այլ ազատ նաւահանգիստներ հիմնելու իրաւունք Էգէյեան եւ

Միջերկրական ծովերուն ափին, Կոստանդնուպոլսոյ եւ Պաթումի մէջ: Աւելին՝ երկաթուղին, որ պիտի անցնի Զայաստանի Զանրապետութեան տարածքէն, Զայաստանի սեփականութիւնը պիտի ըլլայ:

3- Զայաստան-Թուրքիա սահմաններու ապառազմականացման հարցը լուծելու միտումով այդ սահմաններուն վրայ գտնուող զօրքին գերագոյն հրամանատարներ պիտի նշանակուին Դաշնակից ուժերու կամ չեզոք երկրներու զինուժէն ընտրուած աստիճանաւոր զինուորականներ: Այսպէս՝ Իրաւարար Վճիռով նախատեսուած էր Զայաստանի Զանրապետութեան տարածքին (որ մօտ 57,000 քառ. քմ. էր) աւելցնել Վանի, Էրզրումի եւ Պիթլիսի նահանգներուն մեծագոյն մասը եւ Տրապիզոնի նահանգի 1/3ը՝ Տրապիզոնի նահանգիստով (ընդհանուր՝ մօտ 103,000 քառ. քմ.): Այսպիսով՝ Զայաստանի Զանրապետութիւնը պիտի ունենար մօտ 160,000 քառ. քմ. տարածք:



Սելի Դաշնագիրի փաստաթուղթի կողքը

ՍԵԼԻ ԴԱՅՆԱԳԻՐԻ ԵՆ ՈՒԻԼԱՐՆԻ ԻԱԼԱՐԱՐ ՎՃԻՉԻ ՎԱԼԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՐՉՆԸ

ՍԵԼԻ ԴԱՅՆԱԳԻՐ

Սելի Դայնագիրի վերջաբանին մեջ արձանագրուած է, որ դայնագիրը՝ պատրաստուած ֆրանսերէն, անգլերէն եւ իտալերէն լեզուներով, պիտի վաւերացուի: Իսկ վաւերացման հաստատագիրներու յանձնման արձանագրութիւնը պիտի պատրաստուի, երբ այն հաստատուի մէկ կողմէն՝ Թուրքիոյ, իսկ միւս կողմէն՝ երեք հիմնական Դայնակից պետութիւններուն կողմէ: Եւ, վերջապէս, նըշուած է, որ առաջին արձանագրութեան թուականէն սկսեալ՝ դայնագիրը ուժի մէջ կը մտնէ այն պայմանադիր բարձր կողմերուն միջեւ, որոնք հաստատած են զայն:

Թուրքիան, ստորագրութենէն յետոյ չհաստատելով Սելի Դայնագիրը, Խաղաղութեան խորհրդաժողովի քարտուղարութեան չէ յանձնած դայնագիրի վերջաբանին մէջ նախատեսուած հաստատագիրը: Այս հանգամանքը տեղի կու տայ այն տիրող առարկութեան, թէ Դայնագիրը ուժի մէջ չէ մտած:

Սակայն Սելի Դայնագիրը, հակառակ այն իրողութեան, որ կարելի է վիճարկել թէ ան կատարողական ուժ չէ ունեցած, իր վաւերականութիւնը չէ կորսնցուցած: Սելի Դայնագիրը վաւերական փաստաթուղթ կը սեպուի հետեւեալ փաստարկներով.

- Դայնագիրը ստորագրուած է առնչակից կողմերու լիազօրուած եւ իրաւասու ներկայացուցիչներու կողմէ:
- Թուրքիոյ կողմէ գահակալ Սուլթան Սուհամմետ Դ-ին վստահուած էր դայնագիրէր ստորագրելու իրաւունքը: Նկատի առնելով, որ այդ օրերուն Թուրքիոյ Խորհրդարանը լուծարուած էր, Թուրքիան պաշտօնապէս չտեղեկացուց դայնագիրը ստորագրող միւս պետութիւններուն, որ իր խորհրդարանը պիտի չվաւերացնէ Սելի Դայնագիրը: Սուլթանը Շորայէ Սալթանաթի (Թագաւորական խորհուրդի) յատուկ նիստ հրաւիրեց՝ որպէս տուեալ ժամանակին Թուրքիոյ մէջ գործող միակ քաղաքական կառոյց, եւ դայնագիրի

վերջնական տարեբերակի ստորագրման մասին որոշում կայացուց: Այսպես՝ Թուրքիոյ կողմէ դաշնագիրը ստորագրուեցաւ Թուրքիոյի նշանակած պատուիրակութեան միջոցով:

- Սելրի Դաշնագիրը, ստորագրման պահէն վաւերական ըլլալով, ամբողջովին գերծ չէ իրաւական ուժէն մինչեւ այն պահը, որ կողմերէն որեւէ մէկը պաշտօնապէս չէ յայտնած, որ ինքը պիտի չվաւերացնէ տուեալ պայմանագիրը: Դաշնագիրը ստորագրող կողմերէն ո՛չ մէկը (ներառեալ Թուրքիան) չէ վիճարկած դաշնագրի վաւերականութեան հարցը:

- Թուրքիոյ պնդումը, որ Լօզանի դաշնագիրը փոխարինած է Սելրի Դաշնագիրը, անկախ անկէ, որ լրջօրէն առարկելի է իրաւականօրէն, պարզապէս կը նշանակէ, որ առնուազն մինչեւ Լօզանի դաշնագրի ստորագրութիւնը Սելրի Դաշնագիրը վաւերական իրաւական փաստաթուղթ կը հանդիսանայ:

- Թուրքիա, Լօզանի դաշնագրի վրայ հիմնուելով, կը պնդէ, թէ ան փոխարինած է Սելրի Դաշնագիրը: Սակայն Լօզանի դաշնագիրը պաշտօնապէս անվաւեր չէ յայտարարած Սելրի Դաշնագիրը: Յատկանշական է նաեւ, որ Յայաստանին առնչուող որեւէ հարցի կապակցութեամբ ո՛չ մէկ յստակ տնօրինութիւն կայ այդ դաշնագիրին մէջ:

- Անկախ անկէ, թէ ինչքան անհրաժեշտ է դաշնագրի յետստորագրութեան վաւերացումը, Թուրքիան երբեւիցէ պաշտօնապէս չէ յայտարարած, որ ինքը պիտի չվաւերացնէ Սելրի Դաշնագիրը:

- Սելրի Դաշնագրի վաւերականութեան հարցը նաեւ պետք է քննարկել միջազգային իրաւունքի սկզբունքներու տեսանկիւնէն: Վաւերականութեան պայմանները լրացուցած ստորագրուած որեւէ պայմանագիր հարկադիր կատարողական ուժ ստանալու պայմաններու լրացումէն առաջ անգամ ամբողջովին գերծ չէ իրաւական ուժէ:

Ուիլսընի իրաւարար վճիռը

Իրաւարարութիւնը (arbitration), որպէս վեճերու լուծման այլընտրանքային տարբերակ, կ'օգտագործուի թե՛ ներպետական վեճերու լուծման, թե՛ յատկապէս միջազգային բնոյթ ունեցող մասնաւոր վեճերու լուծման պարագային՝ որպէս յարմարագոյն տարբերակ:

Հաագայի 1907 թուականի համաժողովէն (Hague Convention, 1907) բխած միջազգային պայմանագիրները միջազգային նախադէպային իրաւունքի (Common Law) ոլորտին մէջ արտայայտիչն են շարք մը այնպիսի կանոններու, որոնք համընդհանուր ճանաչում եւ ընդունելութիւն գտած են վեճերը իրաւարարութեամբ լուծելու հասկացողութեան մէջ:

Ուիլսընի իրաւարար վճիռի վաւերականութեան հարցը քննելու ատեն պէտք է կարելորութեամբ նշել, որ ան կը բաւարարէ այս պայմանագիրներէն «Միջազգային վեճերու խաղաղ կարգաւորման պայմանագիր»ին մէջ տեղ գտած իրաւարարութեան մասին գանազան պայմանները:

Ընդհանուր առմամբ Ուիլսընի Իրաւարար Վճիռը կարելի է ամրագրել որպէս վաւերական փաստաթուղթ հետեւեալ փաստարկներով.

- Համաձայն Հաագայի վերոյիշեալ պայմանագիրին՝ իրաւարարութիւն հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ տուեալ վեճի կողմերը կը համաձայնին վեճը լուծել իրաւարարութեամբ: Այս պարագային հակադիր երկու կողմերը՝ Հայաստանն ու Թուրքիան, Սելի Դաշնագիրը ստորագրելով, համաձայնած են իրաւարար վճիռով լուծելու իրենց սահմանային վեճը:

- Դարձեալ համաձայն Հաագայի վերոյիշեալ պայմանագիրին՝ իրաւարարները պէտք է ըլլան անկախ ու անկողմնակալ եւ պէտք չէ ենթարկուած ըլլան անպատշաճ արտաքին ազդեցութեան, ինչպէս, օրինակ, կաշառքի կամ փտածութեան: Նշենք, որ Ուիլսընը ներկայացնող երկիրը՝ Միացեալ Նահանգները, մշտական դիւանագիտական

յարաբերութիւններ ունէր պատերազմի ընթացքին Օսմանեան Կայսրութեան հետ, նոյնիսկ յետագային քեմալականներուն հետ, այսուհանդերձ այս առումով որեւէ շահախնդրութիւն չէր նկատուեր: Նախագահ Ուիլսըն արդէն նախապէս հանդէս եկած էր իր նշանաւոր 14 կէտերով եւ Օսմանեան Կայսրութեան բաժանման թէզը առաջ քշած էր, հետեւաբար քաջատեղեակ էր ինդիրին: Առաւել եւս ան իրաւաբան ու փաստաբան էր եւ ունէր միջազգային հեղինակութիւն:

- Հաագայի նշեալ պայմանագիրը կը շեշտէ, որ իրաւարարութեան համար փաստարկներու ներկայացումը պէտք է գերծ ըլլայ կեղծիքէ եւ պէտք չէ պարունակէ հիմնական սխալներ: Այս հարցով եւս դժուար է կասկածիլ, որովհետեւ Ուիլսըն Իրաւարար Վճիռի կայացման համար գործի լծեց մասնագիտական յանձնաժողով՝ միջազգային ճանաչում եւ հեղինակութիւն վայելած անձերէ կազմուած:

- Հաագայի վերոյիշեալ պայմանագրին համաձայն՝ իրաւարարը պէտք չէ գերազանցած ըլլայ իր իրաւասութեան սահմանները: Սելրի Դաշնագրով նախագահ Ուիլսընի իրաւասութիւնները, որոնք որպէս իրաւարար ինքն իրաւունք չունէր գերազանցելու, սահմանուած էին ըստ հետեւեալի.

1. Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանները ճշդել՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթլիսի նահանգներուն մէջ:

2. Լուծել Հայաստանի ծով իջնելու անհրաժեշտութեան հարցը:

3. Տնօրինել վերոյիշեալ սահմանի յարակից Օսմանեան բոլոր հողերու ապառազմականացման հարցը:

Նախագահ Ուիլսընը իր վճիռը յստակօրէն կայացուցած է վերոնշեալ հարցերու սահմաններուն մէջ:

- Հաագայի վերոյիշեալ պայմանագրի մէկ յօդուածին մէջ կը նըշ-ւի, որ պատշաճ կերպով առնուած ու կողմերու ներկայացուցիչներուն ծանուցուած իրաւարար վճիռը վերջնականօրէն եւ առանց վերաքննութեան իրաւունքի կը լուծէ վեճը:

- Իրաւարար Վճիռը հաստատման կարիք չունի: Ան ուժի մէջ մտած է իրապարակման պահէն:

- Սելրի Դաշնագիրի 89-րդ յօդուածին մէջ կը վերահաստատուէր Իրաւարար Վճիռը, որուն գործընթացը արդէն իսկ սկսած էր:
- Նոյնիսկ Միացեալ Նահանգներու հոգատարութեան հրաժարումով Իրաւարարութիւնը կանգ չառաւ:
- Իրաւարարութեան ոլորտին մէջ ընդունելութիւն գտած սկզբունք է, որ պայմանագիրին մէջ ներառուած Իրաւարարութեան մասին յօդուածը պետք է դիտարկուի որպէս առանձին պայմանագիր, որ կը գործէ անկախ այն պայմանագրէն, որուն մէջ ներառուած է ան:
- Լօզանի դաշնագիրը չ'արժեզրկեր Նախագահ Ուիլսընի վճիռը:
- Նախագահ Ուիլսընի վճիռը հրապարակուած է այն ժամանակ, երբ Սելրի Դաշնագիրը իրաւականօրէն վաւերական փաստաթուղթ էր:
- Թուրքիան երբեք չ'է առարկած Նախագահ Ուիլսընի Իրաւարար Վճիռը:



Հայոց Ցեղասպանութեան հետեւանքները

2015 թուականի Յունուարի 29-ին Ծիծեռնակաբերդի բարձունքէն հնչեց համահայկական հռչակագիրը: Այդ հռչակագիրով հայութիւնը ի լուր աշխարհին կը յայտարարէր, որ այսուհետ ան պիտի պայքարի ո՛չ միայն Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման, այլեւ հայ ժողովուրդի խախտուած իրաւունքներու վերականգման համար: Այսպիսով՝ Հայոց Ցեղասպանութեան հետեւանքներու յաղթահարման գործընթացին մեկնարկ կը տրուէր:

Թուրքիոյ հանրապետութիւնն ու հասարակութիւնը, որպէս ժառանգորդը Օսմանեան Կայսրութեան, պարտաւոր են հայերուն տալ համապարփակ հատուցումներ:

Հայոց Ցեղասպանութիւնը ունեցաւ իր ծանր ու անդառնալի հետեւանքները, որոնցմէ գլխաւորը **հայրենագրկումն** է. Հայոց Ցեղասպանութեամբ արեւմտահայութենէն բռնագրաւուեցաւ իր բնօրրանը:

Երկրորդ հետեւանքը 1,5 միլիոն **մարդկային կեանքի կորուստն** է: Եթէ ցեղասպանութիւն տեղի չ'ունենար, այսօր անելի քան քսան միլիոն կը հաշուուէր հայութեան ընդհանուր թիւը:

Երրորդ հետեւանքը հայութեան **նիւթական** հսկայական կորուստն է: Հայոց Ցեղասպանութեան զուգահեռ տեղի ունեցաւ հայերու ունեցուածքի զանգուածային բռնագրաւում: Յատուկ օրէնսդրութեամբ, տեղահանութեան օրէնքէն ետք, թրքական պետութիւնը «լքեալ գոյքի» մասին օրէնք մը մէջտեղ բերաւ, որով տեղահանուածներու գոյքը համարեց լքեալ, հետեւաբար զայն նկատեց թրքական պետութեան սեփականութիւնը: Այսպիսով՝ ան թալանը օրինականացուց:

Չորրորդ հետեւանքը **մշակութային ժառանգութեան կորուստն** է: Հայկական քաղաքակրթական ժառանգութիւնը ոչնչացնելու կամ իւրացնելու քաղաքականութիւնը տակաւին կը շարունակուի:

Հինգերորդ հետեւանքը ցեղասպանութեան հոգեբանական

հետեւանքն է, որ յետեղեմնեան իրերայաջորդ սերունդներուն վրայ խոր ազդեցութիւն կը ձգէ: Հայ ժողովուրդը Յեղասպանութենէն ետք տասնամեակներ շարունակ ապրեցաւ ցեղասպանուածի բարդոյթով: Ան զարգացման մղումին փոխարէն աւելի գոյատեւման հոգեվիճակով ապրեցաւ:



Հայաստան-Թուրքիա սահմանը՝ Ուիլսոնի սահմանագծումով

Մեր Պահանջները

Ի՞նչ կը պահանջէ այսօր հայութիւնը թրքական պետութենէն իր իրաւունքներուն վերականգման համար. փոխհատուցման պատկերացում

Ճանաչում

Թրքական կառավարութիւնը պաշտօնական յայտարարութեամբ պետք է ընդունի Հայոց Յեղասպանութեան փաստը: Ճանաչումով վերջ պետք է տրուի ժխտողականութեան քաղաքականութեան:

Ներողութիւն

Թրքական կառավարութիւնը թուրք ժողովուրդի անունով պետք է հայերէն պաշտօնական ներողութիւն իսկրէ Յեղասպանութեան և յետագային անոր ժխտման համար:

Կրթում եւ Յիշատակում

Թրքական կառավարութիւնը պետք է իրագեկէ թուրք ժողովուրդը Հայոց Յեղասպանութեան փաստին վերաբերեալ՝ յիշատակման եւ կրթական նախաձեռնութիւններով: Առաջին հերթին ան պետք է ձեռնարկէ Թուրքիոյ առողջացման գործընթացի մը՝ պետական հաստատութիւններէն, իրաւական համակարգէն եւ թրքական մշակոյթէն ջնջելով Յեղասպանութեան հետեւանք հանդիսացող վերաբերմունքը, օրէնքները եւ յատկանիշները: Առողջացումը անհրաժեշտ է, որպէսզի հայերը, Հայաստանի մէջ թէ դուրսը, այլեւս չենթարկուին սպառնալիքի:

Գոյքի վերադարձը եւ գոյքի, մահուան ու տառապանքի փոխհատուցում

Յեղասպանութեան ընթացքին բռնագրաւուեցան հող,

շինություններ, գոյք, հաստատություններ, տնտեսական կառույցներ եւ ձեռնարկություններ, որոնք պետք է վերադարձուին, եթե անոնք տակալին ոչնչացած չեն, իսկ ոչնչացած ըլլալու պարագային անոնց դիմաց պետք է տրուի փոխհատուցում:

Նիւթական փոխհատուցման գումարին մէջ պետք է ներառուին ունեցուածքի գինի աճը եւ տոկոսները, ինչպէս նաեւ սպասուելիք ֆինանսական եւ այլ օգուտներ:

Պետք է փոխհատուցուին նաեւ ստիպողական աշխատանքն ու նիւթական բռնագրաւումները:


Փոխհատուցում պետք է տրուի նաեւ Յեղասպանութեան իբր հետեւանք տեղի ունեցած մահուան, ֆիզիքական եւ հոգեկան տառապանքներուն եւ ընտանիքի ամբողջական կամ մասնակի ոչնչացման:

Մահուան ու տառապանքներու դիմաց տրուող դրամական փոխհատուցման նպատակը ներկայի պատիժի միջոցով անցեալին հասցուած վնասի չեզոքացումն է:

Հողային Պահանջք

Ուիլսընի իրաւարար վճիռը միջազգային իրաւունքի հիմամբ անժամկետ է, անբեկանելի եւ պարտադիր կատարման համար: Ուիլսընեան սահմաններով Հայաստանը իր սեւծովեան ելքով կ'ապահովէ հայկական պետութեան կենսունակութիւնը եւ այդ հողերուն վրայ հայ ինքնութեան վերակերտման կարիքները:





-  Turkish-Armenian boundary
-  Other international boundaries
-  Unmarked international boundaries
-  Old Turkish-Russian boundary
-  Vilayet boundaries
-  Sanjak boundaries
-  Kaza boundaries
-  Railways, broad gauge

ERZERUM Names of the vilayets of Erzerum, Trebizond, Van, and Sivas and other administrative units

Map compiled under the direction of Major Lawrence Martin, General Staff, U. S. Army, by the topographic branch U. S. Geological Survey, in cooperation with the Department of State, from field observations by the Harbord Mission and from maps of the Turkish General Staff, scale 1:200,000, German maps prepared during the war, scale 1:400,000, and British maps of Persian and Transcaucasian territory, scale 1:1,000,000



Woodrow Wilson